ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- --ի 20-- թվականի №--Ա
քաղ. Երևան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԾԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐԻ 55/3, 55/26, 55/33 ԵՎ 55/34 ՀԱՍՑԵՆԵՐԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Երևանի Պետական Համալսարանի շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) 2020 թվականի հունիսի 10-ի №10/006 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հայտնելով, որ Երևան քաղաքի Ծարավ Աղբյուրի 55/3, 55/26, 55/33 և 55/34 հասցեներում կառուցվել են բազմաբնակարան շենքեր (այսուհետ՝ Շենքեր), որոնց սպասարկումն իրականացնում են «Նորավան» և «Ավան-5» համատիրությունները (այսուհետ՝ Համատիրություններ): Կազմակերպության գրության համաձայն՝ Շենքերը խմելու ջրի մատակարարմամբ ապահովելու համար կառուցվել են երկու պոմպակայաններ, որոնց օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականության իրավունքով անհատույց հանձնումը Հայաստանի Հանրապետությանը տևական ժամանակ կպահանջի, և խնդրել է Հանձնաժողովի անհատական որոշմամբ թույլ տալ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Մատակարար) Շենքերի բաժանորդների հետ կնքել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրեր մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը գործողության ժամկետով, որի ընթացքում

պոմպակայանների սպասարկման և շահագործման հետ կապված բոլոր աշխատանքները կկատարի Կազմակերպությունը,

բ) Շենքերի նոր համակարգերի՝ Մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացման ուղղված լրացուցիչ նախագծանախահաշվային, շինմոնտաժային և այլ աշխատանքների անհրաժեշտություն չկա,

գ) Մատակարարը, Կազմակերպությունը և Համատիրությունները համապատասխան գրություններով հայտնել են, որ չեն առարկում Մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացման գործընթացը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378Ն որոշման 1-ին կետով հաստատված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 23-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝
   1) Շենքերում բնակարանների և տարածքների ջրամատակարարումն ապահովվելու նպատակով դիմող անձանց հետ Կանոնների 22.1, 22.3 և 22.3 կետերով սահմանված ընթացակարգերով կնքվում են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №379Ն որոշմամբ սահմանված օրինակելի ձևին համապատասխան, բացառությամբ պայմանագրի գործողության ժամկետը սահմանող կետի, իսկ պայմանագրերի գործողության ժամկետ սահմանվում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը՝ առանց երկարաձգման հնարավորության.
   2) մինչև Շենքերի նոր համակարգերի սեփականության իրավունքով անհատույց հանձնումը Հայաստանի Հանրապետությանը սահմանազատման կետ է համարվում Մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացման կետը, իսկ Շենքերի նոր համակարգերի շահագործումը և սպասարկումն իրականացվում է Կազմակերպության կողմից.
   3) Շենքերի բնակարաններում և տարածքներում այլ անձանց կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չափումների

միասնականության ապահովման սահմանված պահանջներին համապատասխանող և ստուգաչափված առևտրային հաշվառքի սարք տեղակայված լինելու դեպքում Մատակարարը համարակալված հոլոգրաֆիկ կնիքով կնքում է այն, որը կարող է լրացուցիչ կնքել նաև բաժանորդը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մատակարարին, Կազմակերպությանը և Համատիրություններին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- --ի 20--թ.